մայ թուրքացօղն [այսինքն՝ մահմեդականացողը - Մ.Կ.] թէ զըղջայ, բաղամ (հրամանագիր) առնէ ի շահէն եւ զիւր պահէ դարձեալ»[1]*։*

Թէ ինչ գնով կարելի էր ստանալ Շահի հրամանը կարելի է դատել Giovanni Domenico Nazzario*-ի Ապարաներից 1649 թ. նոյեմբերի 20-ին Հաւատասփիւռի քարտուղարին գրած նամակից, ուր նա հաղորդում է, որ Օգոստինոս Բաջենց արքեպիսկոպոսի ջանքերով 30 հոգի որ առաջ մահմեդականացել էին նորից դարձան կաթողիկէ, քանի որ արքեպիսկոպոսի հետ «ահագին ծախսով» գնացին շահի մօտ եւ յաջողեցին։ Հաղորդում է նաեւ, որ նրանց օրինակով այժմ ուրիշներն էլ գնացին*[2]*։ Նոյն դէպքերի մասին Օգոստինոս Բաջենցը Հաւատասփիւռի նախագահին զեկուցում էր, որ ստիպուած ծախեց արքեպիսկոպոսական մատանին, հովուական խաչը, որ նուէր էր ստացել Լեհաստանի թագաւորից, պարտք արեց 200 սկուդ՝ մահմեդականացած քրիստոնեաներին կաթողիկէ հաւատքին վերադարձնելու թոյլտուութիւնը Շահից ստանալու համար*[3]*։*

Այնուամենայնիւ, նման դէպքերը եզակի ու հազուադէպ էին եւ երբեմն վիճակը այնքան էր ծանրանում, որ ժամանակագիրը երբեմն ստիպուած էր Արարատեան երկրում պարսկական տիրապետութեան անարդար լուծը «առաւել համարձակիլ ասել քան զօսմանցւոց»[4]*։*

Ճիշտ է, պապերի, եւրոպական թագաւորների նամակների ու հայ կաթողիկոսների բազում բողոքների շնորհիւ շահական հրովարտակներով մի շարք անգամներ (1721, 1724, 1731, 1735, 1748, 1825 թուականներին)[5] *կասեցուեց այս օրէնքի գործադրութիւնը, սակայն գործնականում այն կիրառութեան մէջ մնաց ընդհուպ մինչեւ XX դարի սկիզբը։*

---

1 **ԲԱԲԳԷՆ աթոռակից կաթողիկոս.** *Յուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային Մատենադարանի Հայոց.* Անթիլիաս, 1961, էջ 900։

2 SOCG, vol. 292, f. 262+273, 267-268.

3 SOCG, vol. 292, f. 295+298.

4 **ԲԱԲԳԷՆ կաթողիկոս.** *Նշուած աշխ.,* էջ 900։

5 *Շահական հրովարտակների բնագրերը համապատասխանաբար տե՛ս Մաշտոցի անուան Մատենադարան, կաթողիկոսական դիւան, թղթապանակ 244, վաւ. N 255 (սրա բնագիրը չի պահպանուել), թղթապանակ 1գ, վաւ. N 330, 333, 396, թղթապանակ 4, վաւ. N 144։*